ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **23/հունիսի/2022 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու .....12..... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Գնդեվազ և Կեչուտ գյուղերի վարչական ղեկավարներ Սևակ Մկրտչյանը և Արտակ Բագրատյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Արսեն Գառնիկյանը և ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պաշտոնակատար Արմինե Ղազարյանը:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի առաջին նստաշրջանի հինգերորդ՝ հունիսի 23-ի նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը.

1.1. Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի սկզբնամասում գտնվող Վ. Սարգսյանի անվան զբոսայգու, Ազատամարտիկների պուրակի բարեկարգման աշխատանքների,

«Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկի համար ամենագնացի (ռատրակ) ձեռք բերման ծրագրերը ներկայացնելու, ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու և Ջերմուկի համայնքի 2022 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքում աղբահանության իրականացման կարգը և սանիտարական մաքրման սխեման հաստատելու, աղբահանության վճարների դրույքաչափերն ու կիրառվող արտոնությունները սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 31-ի N 35-Ն որոշումն ուժը կորցած ճանաչելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 13-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Ա. Գառնիկյան

1.4. Ջերմուկ համայնքի 2022 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Ա. Գառնիկյան

1.5. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասը աճուրդային եղանակով օտարելու, վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Ա. Գառնիկյան

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 93-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.7. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Արսենյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----------12 Դեմ----------0 Ձեռնպահ----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՍԿԶԲՆԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ Վ.ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԶԲՈՒՍԱՅԳՈՒ, ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊՈՒՐԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՃՈՊԱՆՈՒՂԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԳՆԱՑԻ (ՌԱՏՐԱԿ) ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 25-րդ կետերի պահանջով և նկատի ունենալով, որ համայնքի կողմից ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2022 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին տրամադրվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի սկզբնամասում գտնվող Վ. Սարգսյանի անվան զբոսայգու, Ազատամարտիկների պուրակի բարեկարգման աշխատանքների, «Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկի համար ամենագնացի (ռատրակ) ձեռք բերման ծրագրերի ֆինանսավորման նպատակով Ջերմուկ համայնքի 2022 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Եկամտային «38-01.00-պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով սուբվենցիա» գործառնական դասակարգում հոդվածն ավելացնել 93803,7 հազար (իննսուներեք միլիոն ութ հարյուր երեք հազար յոթ հարյուր) ՀՀ դրամով՝ ծախսային «04-05-05-53-ճոպանուղու սուբվենցիա» գործառնական դասակարգման «5121- տրանսպորտային սարքավորումներ» և «08-01-01-52 - հանգստի գոտիների, զբոսայգիների կառուցում և պահպանում» գործառնական դասակարգմամբ «5113-շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար ավելացնելով 58273,32 հազար (հիսունութ միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամով և 35530.38 հազար (երեսունհինգ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար երեսունութ) ՀՀ դրամով:

2) Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և Ջերմուկ համայնքի 2022 թվականի բյուջեի ֆոնդային մասում կատարել ներքին փոփոխություններ. «06-02-01-51-համայնքների զարգացում» գործառնական դասակարգմամբ «5113- շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական հոդվածը պակասեցնել

101700,0 հազար (մեկ հարյուր մեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամով, ավելացնել «04-05-05-53 -Ջերմու համայնքի ճոպանուղի» գործառնական դասակարգմամբ «5121-տրանսպորտային սարքավորումներ» և «08-01-01-52-հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում և պահպանում» գործառնական դասակարգմամբ «5113-շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար 58274,0 հազար (հիսունութ միլիոն երկու հարյուր յոթանասունչորս հազար) և 43426,0 հազար (քառասուներեք հազար երկու հարյուր քսանվեց հազար) ՀՀ դրամով:

3 Հաստատել Ջերմուկ համայնքի բյուջեի փոփոխությունները՝ ի գիտություն ընդունելով համայնքի 2022 թվականի բյուջեն հետևյալ ցուցանիշներով՝

եկամուտներ՝ 959,468,785,0 ՀՀ դրամ

ծախսեր՝ 959,468,785,0 ՀՀ դրամ

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------12---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 35-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, 88-րդ հոդվածով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ, 8-րդ հոդվածի 7-րդ, 10-րդ հոդվածի 4-րդ և 13-րդ հոդվածի 2-րդ մասերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով, «Թափոնների մասին» օրենքի 11-րդ հոդվածով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝

1. Ընդունել ի գիտություն, որ

1) Ջերմուկ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպում և իրականացնում է «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ իր կանոնադրական լիազորությունների շրջանակներում և սույն որոշմամբ սահմանված նորմերին ու պայմաններին համապատասխան:

2) աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են Ջերմուկ համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային հոդվածով:

2. Սահմանել Ջերմուկ համայնքում աղբահանության դիմաց գանձվող տեղական վճարների դրույքաչափերը և կիրառվող արտոնությունները՝ համաձայն հավելված 1-ի:

3. Սահմանել շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման համար Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող թույլտվության համար գանձվող տեղական վճարի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

4. Սահմանել Ջերմուկ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը՝ համաձայն հավելված 3-ի:

5. Հաստատել Ջերմուկ համայնքում աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելված 4-ի:

6. Հաստատել աղբի հավաքման և փոխադրման համար Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից թույլտվության տրամադրման պայմաններն ու կարգը՝ համաձայն հավելված 5-ի:

7.Հաստատել Ջերմուկ համայնքի տարածքի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելված 6-ի:

8. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 31-ի «Ջերմուկի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, ինչպես նաև աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը սահմանելու մասին» N 35-Ն որոշումը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ----------12 *Դեմ*----------0 *Ձեռնպահ*----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 13-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԳԱՌՆԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ, 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 408 որոշման պահանջներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին» N 13-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----12---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԳԱՌՆԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝

1. Համաձայնություն տալ 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Ջերմուկ համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների (Ձև 22 և Ձև 22ա):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----11---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----1----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՍԵՆ ԳԱՌՆԻԿՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 42/5 հասցեում գտնվող համայնքային սեփականություն (վկայական՝ 09062022-10-0008) հանդիսացող 10-002-0034-0008 կադաստրային ծածկագրով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,004 հա) բնակելի կառուցապատման նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 180 000 (հարյուր ութսուն հազար) դրամ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------9---------- *Դեմ*----------3---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 93-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արմենուհի Սաֆարյանի կողմից մանդատը վայր դնելու հանգամանքը՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի «Ջերմուկ համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի թեկնածությունը հաստատելու մասին» N 93-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ 1-ին կետում «Արմենուհի Սաֆարյանի» բառերը փոխարինել «Գոհար Խաչատրյանի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------11---------- Դեմ----------1---------- Ձեռնպահ----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը՝ 17.00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------12---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	բացակա
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	բացակա
Մկրտչյան Մարինե Մայիսի	

Բաբայան Ժիրայր Ժորայի	
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____